

1843 ԲԱԶՄԱՎԷՊ 1911

ՀԱՆԳԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ԿՅ
ՓԵՏՐՈՒՄ
Թ. 2

ԱԶԳԱՅԻՆ - ԲԱՆԱՌԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԿԱՊՈՅՏ ՔՐՈՆԻԿ

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼՐԱԳԻՐՆԵՐՈՒ և առանձին տետրերու մէջ, տեսակ մը յուսախարի տրտունջներ կան գրականութեան դէմ, օրուան գրականութեան դէմ:

Ո՛ր է գրականութիւնը, կը մեռնի՞ արդեօք գրականութիւնը: Ազատութեան մէջ աւելի մեծ զործեր կը սպասուէին անկէ. անբաղդատելի զլուխ գործոցներ:

Ինչ կը սպասեն այս մարդիկ ուրեմն գրականութենէն, կամ ինչ կը հասկնան գրականութիւնը ըսելով: Մի՞ կը հառաչեն գուցէ դեռ այն երանելի օրերուն ետեւէն, ուր պրիմակէ ծոպերով առտակը կեանքին համար ամէն բանն էր, ամենէն մեծ բանը:

Գրականութիւնը ուրեմն մարդն է, ազգն է, ժամանակն է: Հրդեհի ժամանակ կը նստի՞ մարդ լուսնի լոյսին վրայ բանաստեղծութիւն գրել: Ամենէն մեծ զլուխ գործոցը, գրականութիւնը՝ պիտի չընէ՞ր նա եթէ իրարանցումի մէջ օգնութիւն աւղաղակէր ու մանաւանդ օգնութեան հասնէր: Ես չեմ գտներ նկարագրական բուն

բառը անոնց՝ որ հասարակաց այս իրարանցումի մը ժամանակ ո՛ր է գրականութիւնը կ'աղաղակեն:

Ինչ կը նկատէ ուրեմն մեր ընթերցողը լոր ամբոխը, այն հազարաւոր սիւնակներ՝ որոնք կը լեցնեն լրագիրներուն ու պարբերական հանդէսներու թերթերը: Ասոնք բառերու բարդութիւններ են արդեօք միայն թէ ձեւուած ու ձուլուած միտքեր:

Ինձ կ'երեւի թէ գրուածներու բազմութեան մէջ, մարդ կը կորսնցնէ պահանջուած գրականութիւնը, լաւ գրականութիւնը:

Գիտութեան պէս բան մ'ալ, այո՛, կը պակսի դեռ հասարակութենէն շատերուն ըով. գիտնալ գտնելու ու մանաւանդ գիտնալ ընտրելու գիտութիւնը կ'ըսեմ:

Այսօրուան օրս մենք ամբողջ լեզէն մը ունինք գեղեցիկ գրողներու, և տասնեակ մը ոչ միայն գեղեցիկ այլ և գիտութեամբ գրողներու: Զարդիս մեզի կը պակսին իրացնէ այն հաստափոր, այս մոռցուած բառը արթնցնելու համար, հատորները, որուն մարզս կրնայ նուիրուիլ երկվեցեակ մը ամիսներ, զայն ուսումնասիրելու ու հասկնալու համար: Բայց ո՛ր են պատեհութիւնները, ժամանակը թողլու

համար որ մարդս տարի մը նստի գիրք մը կարդալու համար:

Ամէն դար իր գրականութիւնը կը հանէ: Մեր դարուն է արագ, ամբողջ ու հոծ: Շարժումը, հիմայ, կեանքի ամէն ճիւղերուն մէջ զխազարեցնող է: Շտապով և ուղղակի կ'երթան. ինքնաշարժ կառքի մէջ, Յեղուածի ու զգացականութեան քննական իմաստասիրական վէպին մէջն է որ կը պահանջուի հիմայ տիրել տալ ամէն տեսակ մտածութեանց, գունատրեալ ու անապակ խօսուածքի մը ուժով, ներկուռ այնքան՝ մինչև կենաց ամբողջ փուլի մը կամ շրջանի մը երկարածգում տալու աստիճան: Մեր ժամանակէն չէ այլ ևս դասախօսութեանց մէջ երկայնմտութիւնները փորձել. իսկութիւնը կը տրուի համանգամայն, ամբողջ շօշափելի իրականութիւնը ինչ որ կայ տեղաւորուած գիտութեան ու գրականութեան նորագոյն խուզարկութեանց մէջ:

Ունեցած ենք երբէք ժամանակ մը ուր գտնուած ըլլան այսքան բազմութիւն մը գրողներու իմացականութեանց ու տաղանդներու ամէն դասակարգերուն մէջ: Հասարակութիւնը պէտք է մանաւանդ հաշտուիլ եղածներուն մէջ ընտրութիւն մ'ընելու քան զեռ չյայտնուած ակնկալութիւններ ունենալու: Ու գեղեցիկ գրականութիւնը, գրականութիւնը այնքան ջերմապէս պահանջուած, ընդհուպ պիտի բարձրանայ ինքնին ու յայտնուի՝ ինչպէս պանթոնի մը ճակատը՝ շքեղ ու ամբողջացած: Եւ միջոցները ունենալու համար զօրաւոր պատմութիւն մը գիտութեան ու գրականութեան ամէն ճիւղերուն մէջ, շատ ալ դժուար չէ: Պարզապէս թոյլ պէտք չէ տրուի պարբերականներուն ու օրաթերթերուն մէջ գրողներուն՝ որոնք ուրիշ բան չեն ըներ, բայց եթէ միշտ սկսիլ, կամ երբէք չեն սկսիլ աստիճանի մը մէջ ուր հանճարոյ կայծ մը փայլի: Հարկ է որ միտք մը տիրէ ամէն օրաթերթի ու պարբերականի մէջ: Այս միտքը պէտք է որ հոն կազմէ աւանդութիւն մը, պատմութիւն մը, կեանք մը մեծ ու զանազանեալ:

Ասով իր շուրջը ստեղծուող հասարակութեան ու թերթին միջև տեսակ մը ընտանութիւն կը մտնէ: Ու ընթերցողը պիտի գտնէ իր վարժած ու նախընտրած հեղինակը, հոն, այս ինչ էջին վրայ, այս ինչ կարմրադեղին տակ, և մէկ երկու քառորդ ժամու չափ, հաճելի կամ օգտակար խօսակցութիւն մը պիտի ունենայ հետը, այժմէութեան նիւթի մը կամ հին զբօսեցուցիչ ու հրահանգիչ խնդրի մը շուրջը:

Ու գրականութիւնը այն ատեն գեղեցիկ պիտի երևի, և զայն պիտի գտնեն արժող բան մը երբ կատարելութիւնն ունենայ մանաւանդ կեանքին մէջ հաճոյք մը կամ իմաստ մը դնելու:

Լաւ գրականութիւնը միշտ ի ծաղկի է ժամանակին ու անձին համար:

ԵՍ ՊԻՏ' ԵՐԹԱՄ ՊԻՇԵՐԻՆ ՄԷՋ

Ես պիտ' երթամ գիշերին մէջ
Երբոր ամէն ինչ քուն ըլլայ.
Պիտ' երթամ բաց դաշտին մէջէ
Ատղերուն տակ, և պիտ' անոնք
Լքեն ծանօթ ձայնը, ուրիշ
Եւ հեռաւոր օրերու ձայնն.
Անոնց համար պիտի գրտնեմ
Մոռցուած խօսքերն ու մըռունչներն
Ու կրակն ու թափն երիտասարդ
Առուգութեան: Անոնք լուռուռ
Պիտ' ունկընդդին, կ'ունկընդդին
Ինչպէս անցած այն ժամանակն,
Եւ չըտեսնեն պիտի դէմքիս
Դաւուկն... ամէն ինչ, ամէն ինչ
Անոնց համար պիտի ըլլայ
Ինչպէս երբեմն: Իսկ հոգւոյ մէջ
Ի՞նչ պատահի պիտի արդեօք:

Թարգմ. Հ. Ա. ՂԱԳԿԵԱՆ

Վիկտորիա Աղանդր

